

Ա Ր Ա Ր Ա Տ

ԿՐՐՆԱԿԱՆ՝ ԲԱՐՈՅԱԿԱՆ՝ ՊԱՏՄԱԿԱՆ՝ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ
Ա Մ Ս Ա Գ Ի Ր

ՌԵՍԻԻ. ԻԵ. ՏԱՐԻ. ՀԱՄԱԲԱՐՁԵՐԱԲԳԻ ԾԳՈՍՏՈՍ 1894 թ.

ԿՐՐՆԱԿԱՆ

ՊՍԵԿԻ Ս. ԽՈՐՀՈՒՐԳԻԸ


Ը.
ՀՀԱՍՏՈՒԹԻՒՆՆՆ
Ը Ս Տ

ՀԱՅԿԱՍՏԱՆԵԱՅՑ ԵՎԵՂԵՑՈՒ ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹԵԱՆ
(Շարունակութիւն). *



ենք պէտք է նախապէս որոնելինք թէ ինչ օրէնք կամ ինչ սովորութիւն կար Հայաստանում նախ քան քրիստոնէութիւնը. սակայն ոչինչ տեղեկութիւն չունինք այդ ժամանակից: Հաստատուն տեղեկութիւններ ունինք միմիայն Հռովմէական պե-

տութեան օրէնսդրութիւնից: Հին հռովմէական օրէնքը հաշուում է այսպէս.



Նթէ, դ և զ պատկուէին այդ կհամարուէր երկրորդ աստիճան կամ ծնունդ. ե և զ՝ երրորդ աստիճան. ե. և զ. չորրորդ աստիճան. է. և ը. վեցերորդ. ե. և զ. կարող էին պատկուէր բայց չէին կարող ամուսնանալ զ և ա (խորթ որդի) և ոչ զ ու ը:

Անշուշտ պետութեան մէջ եկեղեցին ևս կյարմարուէր այդ օրէնքներին: Բայց ահա

*. Տես. նախընթաց համարը:

բոլոր սրտէ ընդունելով Հայաստանեայց ար-
խարհ, ի ճակատ այն ՄԱՍՆԵՆԻՆ՝ ուր այս ար-
մենը կան խմբուած: իրաւամբ արձանագրել
տուեց իւր որդւոց այս հակիրճ խորագիրը—
ՓԱՄԱԿԱՐԳՈՒԹԻՒՆ:

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻՈՅ:

ՍԱՀԱԿ ՎԱՐԳ. ԱՄԵՏՈՒՆԻ.

ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐՈ.

ՅԱՂԱԳՍ ԶԱՅՆԻՅ ԹԷ ՈՒՍՅԻ ԴՏԱԻ:



(Հարունակութիւն).

րանելոյն Բարսեղի
յղ կս ձայնից թէ ուս-
տի իցեն և կամ յուժ-
մէ գտան: զոր թարգ-
մանեաց Ստեփաննոս
փիլիսոփա. զի նա ե-
ղև Երաժիշտ և Հը-

մուտ ձայնից ամ կենդանեաց և բաժաննց
զձայնս իմաստունս. ի՞նչ որ են այսքիկ:
Բառաչել. Բչել. Կռնչել. Գոչել. Բըն-
չել. Մնչել. Բբչել. Կառանչել. Մըռ-
մըռել. Ճչել. Կանչել. Գոհգոհչել.
Վչել. Խանչել. Հառաչել. Կառանցել.
Կաղկնձել. Հաջել. Կանկանջել. Զո-
կել որ է Կարկաջել. Սողալ. Սրովին-
ջալ. Մնջնջել. Ճոճոռել: Եւ սա առնոլ
ի ձայնից և գ[ո]րծէ զուգաթիւս առ ամ
ձայնս, որ մի առ մի երգեն սոքօք ձայն ար-
բարեալ:

Արդ՝ ետ սորա Սարգիսնոս թեզրոցի լեալ
Երաժիշտ ըստ արուեստատր գործարանի
զամ՝ հաւաքեալ զձայնսն. ի մի աղի և զմի
մի ձայն ի բաց բաժանեաց մինչև ի քարանձ-
անգամ զգալ զխորխտալմունս ձայնից ամ
կենդանեց:

Եւ ետ սորա զեգէոս. Երաժիշտ լեալ սյ-
լակերպ ի սոցանէ յարմարեաց նո՞ւազս և

հարկանէր նովաւ զամ՝ ձայնս կենդանեաց:
Ապա Սենեգէս. երգիչ լեալ. և ուսեալ զնո-
ցայն և ի հիւանակոփ փայտէն հնչմանն գը-
տեալ զառաջին ՁԱ ձայնն: Եւ ապա փլե-
զէգէս. եղբայր նր երաժիշտ եգիտ զգես-
րան. որ է երկրորդ ՁԲ ձայն ի դարունէ
և երկաթէ կռելոց: Եւ ապա Սոփեկէս եղ-
բայր սոցին եգիտ զերաժշտական տառ. ի
տանն որ է երրորդ ՁԳ ձայն աւրինակել
ի գետոց խաղացմանց և ի [Յ]որձանաց հոս-
մանց:

Եւ ապա Պիպանոս քեռորդի նոցին լեալ
երգիչ զուսուստանն որ է չորրորդ ՁԴ ձայն
ի հոսմանէ ծովային ալեաց: Արգելէս. երա-
ժիշտ եգիտ զամ՝ ի մաքրուի որոշաբար
ըստ աշտիճանից ի յի նէն. քանզի ասնն
զնմանէ ոչ միայն վարժել վս որոյ կողպա-
տեալ զլսելիսն և խցել զի մի լուիցեն զայլ
քաղցրութիւն ձայնից. և ի Թէօփիլեան ե-
ղանիլ գործեաց երաժշտականաց զոր ի ձայ-
նից աստեղաց ուսան առաջինքն: Եւ ապա
Դաւիթ թգր և մարգարէ և երգող ածա-
րին երգոյն. և արդ՝ ամից դաս և [Յ]որ-
մարումն ձայնից զմինն ար և ամ անն
զամ՝ զոր մարգարէն ասէ. սղս ասացէք
թգրին մերոյ հետեցին և ոմանք առանց
գործոց երգէին. ասափ և էափ ծծղաւաք
վերագոյէին: Զաքարիա և Ովրամ և Սա-
միաւ և էլիսս և Մովսէս և Դիթում:
տաւղիք երգէին:

Ուշագրութեան արժանի են՝ ըստ տանն ար-
բարածոց է շրմ յայնից 10 բարգեցաւ
և է շրմ յայնից՝ բաժանեաց չորս կողմ և
այլն: և Վնեգէս փլեզէգէս եղբայր նր
Սփեկէս և Պիպանոս գտնուումն ՁԱ, ՁԲ,
ՁԳ, ՁԴ: Այս տեղից երևում է, որ նախ քան
Ս. Սահակը գոյութիւն է ունեցել չորս Բուն
ձայն: Ս. Սահակը կարգաւորել և դարգաց-
րել է, որպէս պատմում է Յայմաւուրբը:
Վերոյիշեալ երկու կտորները համեմատելով
տեսնում ենք, որ ձայների նշանակութիւնը
նոյն և նման է:

Մեր ձեռքն անցած խաղաքերը քսան և

երկու են՝ որոնց իւրաքանչիւրի մէջ պարու-
նակուած եղանակների համեմատութիւնը,
ցանկը թողնուած ենք մի այլ անգամուան-
այժմ՝ յառաջ ենք բերում այս տեղ նոցա
այբրենական և Ութն ձայնի բաժանմանըով-
ընդհանուր ցանկը:

Այս եղանակներից 70 - ի այբբենական ցան-
կը գտնուում է նոյնպէս Հ. Ղ. Ալիշանի Ար-
սուանի մէջ, (տես էջ 254) բայց յայտնի չէ,
թէ սոքա ինչ ձայնի կամ եղանակի են պատ-
կանում Հ. Ղ. Ալիշանի գտածներից 5 - ք
մեր ցանկի մէջ նշանակեցինք երկու աս-
ղանիչով (**). սոքա մեր խաղաղքերի մէջ
չկային: Այս հինգ եղանակը չկարողացանք
տեղաւորել Ութն ձայնի բաժանման մէջ, ո-
րովհետև չգիտէինք, թէ նոքա ո՞ր ձայնի
մէջ են պարունակուում իսկ մնացած 65 - ք,
որ նոյնպէս գտնուում էր մեր 22 խաղաղքի
մէջ, տեղաւորեցինք: Մէկ աստղանիչ գրինք
այն բոլոր եղանակների առաջ, որոնք չկան
Հ. Ղ. Ալիշանի ցանկի մէջ: Այդ խաղաղքե-
րի մէջ կան և այնպիսի եղանակներ, որոնք
թէպէտ ձայնագրած են հին խաղերով, բայց
լուսանցքում եղանակին համապատասխա-
նող անունը չենք գտնում: այլ նորա տեղ մի
երկար գիծ է դրած, երևի արտագրողը կամ
չէ գտել եղանակի անունը կամ իբրև իրան
լու ծանօթ համարելով բաց է թողել և
զանց առել: Անանուն եղանակների թիւն է,
մեր խաղաղքերի մէջ, քսան և մէկ:

ՄԱՆՐՈՒՍՄԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԻ ԱՅԲԲԵՆԱԿԱՆ
ՑԱՆԿԸ:

- Աղաչանք
- Աղանեկ
- Այսաւրմտանէ
- Անմեղուկ
- Անձեզն
- * Անձէթ
- Աշակերտ (2)
- Առաւօտերգ
- Առեղն
- * Առիւծ

- Արծիւ
- * Արջն
- * Աւելի (5)
- * Բաղէ
- * Բղեշխ
- * Բերգ
- * Բոս
- * Բրաւոր
- Գաբրիէլ
- * Գալստեան

- Գայլ
- * Գետ
- Գղաժ
- Գոճնակ
- Գոյնիկ
- Գունակ
- Գուռ
- Գալրուկ
- Գարբին
- * Եզնակ
- Եկեղեցւոյ
- * Երկաթ
- Ղաճտող
- * Ջողատող
- Թագաւոր
- * Իմաստնակ
- ** Իրիցկին
- Լալկան
- Խաբուսիկ
- * Խաչի
- Խաւսող
- Խեղեփ
- * Միժեռն
- * Մնձղայ
- Մովլի
- * Կակղոտ
- Կաղ
- Կատուն
- Կարմիրլանեցի
- * Կիրակամաի
- Կիրատսերէց
- Կողեռն
- * Կրետ
- * Կցխակ
- * Հաս
- Հաւատուոր
- Հաւրնձի
- Հիւանդ
- Հոռոմ
- * Հոռմակ
- Հովիւ
- Չագն (5)
- Ճիչող

- * Ճոխ
- ** Մակեդոնացի
- Մամկոն
- * Մառեղ
- Մաստնակն
- Մատն
- * Մեծգլուխ
- Մեղուն
- * Մեռելքաշ
- * Միքայէլ
- * Մշեցի
- * Մովսէս
- * Յանեզն
- * Յեզմն
- * Յեզմուկ
- Յետքաշն
- * Յովանիսուկ
- * Նաւ
- * Շահեան
- * Շաւառն
- Շնորհազարդ
- * Ոչխար
- Ովէսայ
- Ուղտն
- Չիտ
- Չոր, Չորուկ (4)
- * Պարընիուէ
- * Պիճակ
- Չսհրիկ
- * Չողացք
- * Չորէքաշ
- Չուլահակ
- Ռամլար
- Սայլ
- Սարկաւագ
- ** Սերոբէ
- Սբ Նշանեցի
- ** Ստեղն
- * Սրինկ
- * Վարուժնակ
- Վարսեզն
- Վազտատէք
- Տանուարակ

Տարածումն	Տուկատ
Տարունեցի	Յինայ
Տաւտաւ պայ	Փող (2)
** Տժգոյն	Փրակ
* Տիրոցի ձագ	Քնքշակ

Եղանակների անուններից յետոյ գրուած թուանշանները ցոյց են տալիս թէ այդ եղանակիդ Ութն ձայնի մէջ քանի տեղ է գտնուում: Յանկի մէջ պարունակուող եղանակների թիւն է 129, բայց Տողորանների և քարանների Գանձարանների և այլ գրքերի մէջ յիշուած են մի այլ երկուսն ևս՝ Ալէէլցէ և Խարափայն: այս երկուսն ու 21 անանուն եղանակները գումարելով նախընթացի հետ, բոլորի համագումարը հասնում է 152:

Բայց այս թիւը ճիշդ չափի տեղ չէ կարող ծառայել որովհետև կան եղանակներ որոնք այլ և այլ անունով են կոչուում զանազան տեղեր: Իսկ անանուններից մեծագոյն մասը համաձայնում է ցանկի եղանակներին, եթէ առ առաւելն կրկնուող և համաձայնող եղանակների թիւը հաշուենք մինչև 32, կմնայ զուտ եղանակ 120: Համարեա՝ աճկական եղանակների չափ:

Այժմ՝ տեսնենք, թէ ցանկի մէջ մտնող եղանակները բուն Ութն ձայնի մէջ ի՞նչ տեղ են զաստարուում և ամեն մէկինը քանի են:

ՈՒԹՆ ՁԱՅՆԻ ՆՐԲՈՒԹԻՒՆՆԵՐԸ:

Ա. Առաջին ձայն.

1. Գղած, Գղածն, Գղղած, Գղղածն.
2. Կիրակամար.
3. Իմաստակ, Մաստակ, Մաստակն.
4. Ա՛ մեղուկ, Ա՛նմեղուկն, Ա՛նմեղ.
5. Խուսող, Խուսողն.
6. Չագ, Չագն.
7. Մամկան, Մամկանն.
8. Չագ, Չագն.
9. Հիւանդ, Հիւանդն.
10. Գուսնակ, Գուսնակն, Գուսան.
11. Հոռում, Հոռումն.
12. Չուրհակ, Չուրհակն, Չուրհակ, Չուրհակ.
13. Փորակ, Փորակն.

14. Հոռմակ
15. Մովսէս.
16. Աշակերտ.
- 7 Ըբասր.
18. Երկաթ.
19. Պիծակ.
20. Բռռ.
21. Ծիծեռն Հաթեարեցի.
22. Աւելի, Աւել.
23. Գալրուկ:

ԱԿ. Առաջին կողմն.

1. Գռուղ, Գռուղն, Գրռուղն.
2. Յինայ, Յինայն, Յինա.
3. Եկեղեց, Եկեղ, Եկե, Եկ.
4. Քնքշակ, Քնքշակն.
5. Գոճնակ, Գոճնակն.
6. Աղաւնեկ, Աղաւնեկն, Աղոճեկն, Աղաւն.
7. Ծովցի, Ծովցին.
8. Ջահրիկ, Ջահրայն, Ջահրեկն.
9. Մեռելքաշ.
10. Զողատող.
11. Տարունեցի.
12. Վազատտէք:

ԲՁ Երկրորդ ձայն.

1. Կատուն, Կատու.
2. Զորէքաշ, Զորէքաշն.
3. Արծիւ, Արծիւն.
4. Չագ, Չագն.
5. Հովիւ, Հովիւն.
6. Լալկան, Լալկանն.
7. Անձեղն, Անձեղ, Անձիւն.
8. Զիտ.
9. Բագէ.
10. Շահեան.
11. Չպպք.
12. Աւելի.

ԲԿ. Աւագ կողմն.

1. Ծնորհազարդ, Ծնորհազարդն, Ծնորհազարհազարդ.
2. Հարնձին, Հարնձի.
3. Մեղուն, Մեղու.
4. Սուրբ Նշանեցի, Սուրբ Նշանեցին, Սուրբ Նշանե.

- 5. Կարմիրվանեցին, Կարմիրվանեցի, Կարմիրվան, Կարմիրվա, Կարմրեցի.
- 6. Ողան.
- 7. Կողեան.
- 8. Հաս.
- 9. Մեծ գլուխ.
- 10. Խաբոսիկ, Խաբուսիկ.
- 11. Չորուկ:

ԳՁ. Երրորդ ձայն.

- 1. Զաւճտոյ, Զաւճտողն, Զաճտոյ, Զաճգոյ.
- 2. Գոյլն, Գոյլ.
- 3. Զագն, Զագ.
- 4. Տաւպտաւպայն, Տաւպտաւպայ, Տաւպտաւպա, Տօպտօպայ, Տաւպտօպայն, Տօպտօպայն, Տաւպտօպայն, Տաւպտապոյ.
- 5. Սայլն, Սայլ.
- 6. Առեղն, Առեղ.
- 7. Արջն, Արջ.
- 8. Մշեցին, Մշեցի.
- 9. Շաւառն.
- 10. Զագ Տիրոցի.
- 11. Սրինկ.
- 12. Առոյծ.
- 13. Չոր:

ԳԿ. Վառ.

- 1 Տարածումն, Տարծո, Տարած.
- 2. Խեղեփ, Խեղեփն.
- 3. Մանն, Մաննէ.
- 4. Առաւա տերգ, Առաւտերգ, Առօտերգ.
- 5. Հաւատուոր, Հաւատաւոր, Հաւատուորն, Հաւատուոր, Հաւատվոր.
- 6. Յունեղն, Յունեղ.
- 7. Յեաքաշն, Յեաքաշ.
- 8. Գյ՛իկ, Գոյնիկն, Գունիկ.
- 9. Գարբիէլ, Գարբիէլն.
- 10. Միբոյէլ.
- 11. Յեղմուկ.
- 12. Յեղմն.
- 13. Եղնակ.
- 14. Պարընկուլ.
- 15. Վարուժնակ.
- 16. Անձէթ.

- 17. Աւելորգ.
- 18. Մառեղն.
- 19. Չոր.
- 20. Տանուարակ:

ԳԶ. Զորրորդ ձայն.

- 1. Ռամիւր, Ռամիւրն, Ռընվարն.
- 2. Փոզ, Փոզն, Փոզնէ.
- 3. Դարբին.
- 4. Աշակերտ, Աշկերտն, Աշկերտ, Տաւտակ.
- 5. Տուկատն, Տուկատ. Տաւկատն, Տաւկատ.
- 6. Այաւր մտանէ, Այսօր մտանէ, Այսաւրրմտ, Այամտ.
- 7. Ովէտայն, Ովէտա.
- 8. Աւելի, Աւ.
- 9. Գեա.
- 10. Կակոտա.
- 11. Նաւ.
- 12. Բգեշխ.
- 13. Խնձղայ.
- 14. Ճոխ, Գեա.
- 15. Բերդ.
- 16. Ոչխար.
- 17. Յովանիսուկ.
- 18. Չոր.

ԳԿ. Վերջ.

- 1. Աղաջանք, Աղաջանքն.
- 2. Կաղ, Կաղն.
- 3. Կիրակոսերէց, Կիրակոսերէցն, Կիրակոսեր, Կիրակոս.
- 4. Սրիկաւագ, Սարկաւագն, Սարկաւ.
- 5. Ճիչօղ, Ճիչօղն.
- 6. Զագն.
- 7. Փոզ, Փոզն.
- 8. Թագաւոր, Թագւոր, Թագւորն, Թագվորն, Թագաւո, Թագու.
- 9. Գալստեան, Գալստեա, Գալստ, Գալ.
- 10. Խաչի, Խաչ, Ս՛բ Խաչ, Խչ.
- 11. Աւելի, Աւ.
- 12. Կցխակ.
- 13. Կրեա.
- 14. Վարսեղն.

Այս եղանակների գլխում նշանակուած են Ութն ձայն եղանակները, որոնք առանձին հիմք են կազմում մնացած մանրեղանակների:

Այդ Ութն ձայնն ևս ձայնագրուած է հին խաղերով, ուրեմն և կազմում են առանձին եղանակի Չենք կարող պնդել, որ գոքա նոյն իսկ Շարականի եղանակները լինին քանի որ խաղերի նշանակութեան թափանցելը դեռ անհնար է. ուրեմն և սոքա պէտք է մտնեն այն ընդհանուր գումարի թուում: Իբրև զատ եղանակների որ կունենանք $152 + 8 = 160$:

Եթէ Հայոց բոլոր հոգևոր եղանակները միմեանց հետ գումարենք, ուրեմն և Շարականներինը կլինի $160 + 40 = 200$:

Շարականի եղանակները քառասուն են, բայց քսանը մնացածից ձևափոխուած կամ նոցա նման լինելով, իբրև զատ եղանակ միմեանցից զանազան, միայն քսանն է. այս գումարելով հոգևոր երգերի տեսակների հաւանական գումարի հետ 120-ի վերջնական գումարը կլինի 140 կամ 150:

Այս թիւը մեզ չպէտքէ զարմացնէ, մենք արևելեան ազգ գոլով, մեր եղանակներն ևս արևելեան բազմաձևիչ եղանակներից են և մեծ առընչութիւն ունին:

Այս առթիւ մի այլ անգամ:

ՍՈՂՈՄՈՆ Ա. Ս. ՍՈՂՈՄՈՆԵԱՆ



ՊԱՇՏՈՆԱԿԱՆՔ

ՔԵՂՈՒՆԵՎԻ Ի ԿՈՆԿԱԿԱՅ ՎԵՋԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԱԶԳԻՍ

Կոնդակ Վեհափառ Հայրապետի համարաւ 997 յանուն Տիկին Եկատերինէ Մեղիք Շահնազարեան Գեշափուրի ի Գարբանդ, որով օրհնէ զնա սակս նուիրելոյն ի յիշատակ առն իւրոյ հանդուցելոյ 2000 բուրլիս, ի նպաստ վերանորոգութեան Ս. Էջմիածնի և Գեորգեան ճեմարանի: 25 յունիսի:

Կոնդակ Վեհափառ Հայրապետի համարաւ 1009 յանուն Յովսէփ քահանայի Ամիրաղեան՝ որ ի Վութայիս, որով շնորհէ նմա իրաւունս կրելոյ ոսկեգօծ խաչ, ըստ խնդրանաց Ժողովրդեանն: 2 յուլիսի:

* *

Կոնդակ Վեհափառ Հայրապետի համարաւ 1017 յանուն Յովհաննէս աւագ քահանայի Հիւնքեար Պէյլետեան՝ որ ի Կ. Պոլիս, որով օրհնէ զնա և դրուատէ զպէսպէս երկատիրութիւնս նորա, որոց վերջինն է «Ստուգարանական բառարան Հայ լեզուի», պսակեալն Սահակ—Մեսրոպեան մրցանակաւ: 4 յուլիսի:

* *

Կոնդակ Վեհափառ Հայրապետի համարաւ 1023 յանուն Մինաս քահանայի Միրանեան՝ որ ի Վլատիկաւկազ, որով շնորհէ նմա կրել «Կամիլաւկա» անուանեալ զլիարկն, ըստ խնդրանաց Ժողովրդեանն: 4 յուլիսի:

* *

Կոնդակ Վեհափառ Հայրապետի համարաւ 1024 յանուն Արսէն քահանայի Մանդակունւոյ՝ որ ի Թէոդոսիս, որով շնորհէ նմա իրաւունս կրելոյ խաչ ոսկեգօծ, ըստ միջնորդութեան նախորդ կառավարչի թեմին Բեսարաբիոյ: 4 յուլիսի:

* *

Կոնդակ Վեհափառ Հայրապետի համարաւ 1059 յանուն առաջնորդի Տիխեսաց Գեորգեայիս, որով պատուիրէ պահանջել ի դործակալէն Ախալքալակայ ստոյգ տեղեկութիւնս և կոչելով զքահանայս զիւղօրէիցն նոյն գործակալութեան յանդիմանել, պատժել, զի մի՛ համարձակեցին յայմհետէ թողուլ զնորածինս առանց մկրտութեան, զհիւանդս առանց հաղորդութեան և զննջեցեալս առանց թաղման, յառաջագոյն պահանջելով վարձ մեծազին: 6 յուլիսի:

* *

Կոնդակ Վեհափառ Հայրապետի համարաւ 1060 յանուն որդոց հանդուցեալ Գ. Թումայեանի, որով մխիթարէ զնոսա ընդ դառն կորուստ հօր իւրեանց և մաղթէ կեալ առա-